ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ԳԱԱ ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՏՆՕՐԵՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

03 մայիսի 2021 թվական

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Աստղիկ Վալերիանի Սողոյանի «Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ նոր գրականության բաժնի 30□04□2021թ□3-րդ նիստին մասնակցում էին բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրանուշ Մարգարյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Պետրոս Դեմիրճյանը, բանասիրական գիտությունների թեկնածուներ Արամ Ալեքսանյանը, Թադևոս Խաչատրյանը, Նառա Սարգսյանը:

ԼՍԵՑԻՆ՝ Աստղիկ Վալերիանի Սողոյանի «Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը Երևանի պետական համալսարանում գործող ԲՈԿ-ի՝ Գրականագիտության 012 մասնագիտական խորհրդում պաշտպանության երաշխավորելու հարցը՝ ժ. 01. 01- «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բաժնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սիրանուշ Մարգարյանը, բանասիրական գիտությունների դոկտոր Պետրոս Դեմիրճյանը, բանասիրության թեկնածուներ Արամ Ալեքսանյանը, Նառա Սարգսյանը, Թադևոս Խաչատրյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ Խաչատուր Աբովյանի գրական-ստեղծաբանական ժառանգության քննությունն իր համապատկերի ամբողջության մեջ մշտապես եղել է հայ գրականագիտության կարևոր ու խնդրադիր հարցերից մեկը: Աբովյանագիտության նախընթաց հարյուր հիսուն տարիներին, անշուշտ, արվել և արվում են կարևոր ուսումնասիրություններ՝ հետազոտության կիզակետում

ունենալով մեծ լուսավորչի ու նոր գրականության հիմնադրի ժառանգության քննության ամենատարբեր հարցադրումներ, սակայն, ինչպես հայցորդն է նկատում, Աբովյանի երկերում բազում չնկատված առանձնահատկություններ ու չընթերցված իրողություններ կան, որոնց բացապարզումը կարող է նոր ու հետաքրքիր եզրահանգումների առիթ տալ, որոշակիորեն մոտեցնել տեքստ-ընթերցող հեռացած եզրերը: Աբովյանագիտության ակնառու ձեռքբերումներով հանդերձ, լուսավորական իմացաբանության համատեքստում համադրված Աբովյանի ողջ ստեղծագործության պոետիկան, նրա երկերի տիպաբանական առանձնահատկությունները, ըստ էության, լիարժեք չեն հետազոտվել:

Աստղիկ Սողոյանի ատենախոսության նպատակը, իր իսկ բնորոշմամբ՝ «Աբովյանի գեղարվեստական երկերի կառուցվածքային կողմի քննությունն է՝ շեշտը դնելով պատումի առանձնահատկությունների վրա, թե ինչ միջոցներով և հնարքներով է հեղինակը հյուսում իր պատումը, դիպաշարային ինչ կաղապարներ է կիրառում»: Այս պարագայում միանգամայն ողջունելի է հայցորդի հանձնառությունը, մանավանդ որ բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Մակարյանի գիտական ղեկավարությամբ նա աշխատել է դժվար, ծավալուն, տեսական ու մեթոդական պատշաճ պատրաստություն պահանջող խնդիրների շուրջ:

Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, ենթագլուխների բաժանված երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Աստղիկ Վալերիանի Սողոյանի «Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը» թեկնածուական ատենախոսությունը արդիական է ոչ միայն իր գիտական խնդրադրությամբ, այլ նաև հայցորդի իմացականությունը բնորոշող ձեռագրով□ աբովյանագիտության համապատկերում ուսումնասիրությունն առանձնանում է գիտահետազոտական ավանդական և արդիական մեթոդների (պատմահամեմատական, զուգադրական, կառուցվածքային, հերմենևտիկական, միֆաքննադատական) միաժամանակյա, փոխհամակցված կիրարկմամբ:

Նման սինկրետիկ, համազուգակցված հետազոտական մեթոդի շնորհիվ քննվում են ոչ միայն նոր կառուցակարգեր և ուսումնասիրվում նոր շերտեր, այլև բավարար հիմք է ստեղծվում Խաչատուր Աբովյանի գեղարվեստական երկերի տեքստերի տիպաբանական, կառուցվածքային նորովի և մինչ օրս չդիտարկված առանձնահատկությունների բացահայտման համար:

Ուսումնասիրության առաջին գլուխը, որ հետազոտողը վերնագրել է «Պատումը չափածո երկերի կառույցում», առանձին բաժանումներով քննության է առնում՝ Երկխոսությունները «Աղասու խաղը» պոեմում,
Փաստացի և հնարավոր պատումների հարաբերակցության խնդիրը «Աղասու խաղը» պոեմում, ապա՝ երգիծական պատումների սկզբունքները « Հազարափեշեն» երգիծապոեմում և առակներում:

Գիտական հստակ ձևակերպված սկզբունքով Աստղիկ Սողոյանը «պատմությունը» սկսում է ամենասկզբից՝ բաց չթողնելով քննվող ստեղծագործության

վերաբերյալ որևէ կարծիք, որևէ մանրամասն: Միանգամայն գնահատելի է հանգամանքը, որ երիտասարդ գիտնականը չի կտրում ժառանգորդական կապը՝ ճիշտ հակառակը՝ խորապես ճանաչելով նախընթաց աբովյանագիտությունը, նա հենվում է այդ ահռելի վաստակի վրա՝ երբեմն համաձայնելով եղած դիտարկումների հետ, երբեմն բանավիճելով կամ պարզապես ժխտելով դրանք:

Քննության ի՛ր ընտրած եղանակը ատենախոսը լրացնում և հիմնավորում է որդեգրած հետազոտական մեթոդների հայտնի տեսաբանների տեսակետներով՝ դրանով իսկ առավել տեսականացնելով և մեծացնելով ատենախոսության գիտականացման գործակիցները: Վերջին շրջանում մեզանում անընդհատ խոսվում է գրականության պատմության տեսականացման մասին, հանգամանք, որով վաղուց բնորոշվում է դրսի գրականագիտական միտքը: Առանց վարանելու կարելի է պնդել, որ Աստղիկ Սողոյանի ուսումնասիրության պարագայում հանդիպում ենք աշխատանքային հենց այսպիսի տարբերակի, որ գրականության տեսական պատմության հաջողված ու հետաքրքիր փորձ է մեզանում:

Հայտնի է, որ խորհրդային գաղափարախոսականացված գրականագիտության համապատկերում, հասկանալի պատճառաբանությամբ, աբովյանագիտությունը, ըստ էության, չէր կարող ոչ միայն սպառել, այլև նոր գործիքներով ու գրական բնագրի ընթերցման նոր սկզբունքներով լիարժեք գիտականացնել Խաչատուր Աբովյանի բազմաժանր ժառանգության հետազոտությունը:

Ժամանակաշրջանի իրականության ճշմարտացի պատկերներ, պատմաաշխարհագրական, ազգագրական, էթնոհոգեբանական արժեքավոր տեղեկություններ պարունակող մեծ լուսավորչի գրական ժառանգությունը հիմնականում հատկորոշվում և միասնանում է լուսավորական դարաշրջանին բնորոշ գաղափարները, խնդրադրությունը կյանքի կոչելու դիդակտիկ գործառությամբ, որով էլ պատճառաբանվում է կյանքի և հայկական իրականության այլազան ոլորտների ու բազմաբովանդակ թեմաների ստեղծագործական յուրացումը:

Ատենախոսը նույնպես հանգում է այն ճիշտ եզրահանգման, որ չնայած թեմատիկ և ժանրային բազմակերպությանը, արտահայտչամիջոցների և գեղարվեստական հնարքների բազմազանությանը, կառուցվածքային և ոճական բազմաձևությանը, պատումի բազմաձայնությանը, քնարականության ու էպիզմի, իրականի, պատմականի և առասպելականի, զգացմունքների և բանականի միահյուսված ի հայտ գալուն, Աբովյանի գեղարվեստական ժառանգությունը կուռ, ամբողջական համակարգ է, ունի համախմբող, համակարգված աշխարհայացքային գաղափարական կիզակետ:

Հենց այս կետում է, որ Աստղիկ Սողոյանը, ցույց տալով գրական բնագրերը բազմապլան վերլուծելու ակնհայտ կարողություններ, կարողանում է և՛ տեսական հետաքրքիր ու հիմնավորված ընդհանրացումներ անել, որ անչափ կարևոր է նման աշխատանքների պարագայում, և՛ վեր հանել Աբովյանի Գրի առարկայական ու ենթակայական կենսոլորտները, որ ենթադրում է լուրջ, ստեղծագործական ընթերցում:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Գեղարվեստականի և ոչ գեղարվեստականի սահմանագծին» վերնագրով, ձևակերպվում է նոր խնդրադրությամբ՝

- Ըստ ներքին ձևի հատկանիշի «ուսումնասիրել «Պատմություն Տիգրանի...»- «միջգիտակարգային » ստեղծագործությունը, որ կանգնած է մանկական և մանկավարժական ստեղծագործությունների տիրույթում,
- Նույն համատեքստում քննության առնել Նախաշավիղը՝ երևան հանելով դասագրքի մանկագրական հատկանիշներ, հեղինակ-երեխա-ընթերցող յուրօրինակ դիմում- հարաբերությունները, մանկական պատմի եղանակներն ու միջոցները, երեխա պատմողի առանձնահատկությունները և այլն:

Այս տեսանկյունից էլ, ատենախոսությունը Խաչատուր Աբովյանի գեղարվեստական տեքստերի կառուցվածքային քննությամբ, երկերի արխիտեկտոնիկան և պատումի ինքնատիպությունը պայմանավորող գեղարվեստական միջոցների համազուգակցված բացահայտմամբ, նոր էջ է բացում աբովյանագիտության համապատկերում:

Ատենախոսությունը գիտականացնում է նաև ատենախոսի քննական մոտեցումը տվյալ հարցադրումների կապակցությամբ առկա աբովյանագիտության բացահայտումներին, որոնք երբեմն ելակետային են դառնում իր վերլուծական ընդհանրացումների և եզրահանգումների համար, երբեմն՝ լրացվում:

Վերը ներկայացված երկու գլուխների քննությունը ցուցանում է, որ ատենախոսության ճիշտ ընտրված կառուցվածքն է թելադրում գետահետազոտական մեթոդը՝ հիմնականում տեքստային վերլուծությունից զատ ենթադրելով այնպիսի խնդիրների վերլուծություն, որոնք առնչվում են հեղինակի աշխարհայեցությանը, գեղագիտական համակարգի ներքին տրանսֆորմացիաներին ու ստեղծաբանական տարաբնույթ ձևույթների կիրարկումներին: Այս պարագայում ատենախոսը հայտնվում է ստեղծագործությունների մեկնության համալիր դաշտում, ինչը բնորոշում է սույն ատենախոսության և նրա հեղինակի մասնագիտական որակումը: Աստղիկ Սողոյանը տիրապետում է իր նյութին, ճանաչում այն ամենայն մանրամասնությամբ, երբեմն՝ այնպիսի մանրամասնություններով, որոնք չափազանցության և ամեն ինչ մի տեղում, մի ժամանակի մեջ ասելու պատրանք են ստեղծում: Ա՛յս ատենախոսության մեջ անգամ այս փոքրիկ «վրիպումներն» են գեղեցիկ թվում:

Զարմանալի խորագիտությամբ վերլուծվում են ըստ ժանրերի տարբերակված առանձին ստեղծագործությունները, որի շնորհիվ ի հայտ են գալիս կոնկրետ երկի պոետիկան կառուցվածքային ներկայացնող ատենախոսի քննական բացահայտումները («Մանկական տեսանկյունը «Նախաշավիղ կրթության...» դասագրքում», «Հերոսի ճանապարհի մոնոմիֆի մոդելը «Վերք Հայաստանի» վեպում», «Պատմողի կերպարը վեպում», «մանկագրական պատում», «հուշագրական պատում» և այլն), Աբովանի բազմաժանր ստեղծագործության ինքնատիպ տիպաբանական դրսևորումները, պոետիկան: Ատենախոսության մեջ քննականորեն գնահատվում և

ամբողջացվում է այս կամ այն երկի շուրջ եղած այլազան, երբեմն իրարամերժ կարծիքները և տեսակետները, որն առավել ամբողջական է դարձնում ուսումնասիրության շարադրանքը: Գնահատելի են նաև ատենախոսի՝ երկերի պատումի տիպաբանության, կառուցվածքի և ոճի էական տարբերակումն ու բնութագրումները: Շատ հարցադրումների բացահայտումները ատենախոսը հիմնավորում է՝ ապավինելով օգտագործած հարուստ տեսական գրականության, ինչպես նաև ողջ աբովյանագիտության ձեռքբերումներին:

Այս իմաստով բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում ուսումնասիրության երրորդ գլուխը, որ Աստղիկ Սողոյանը տարբաժանել է երեք ենթագլուխների և «Վերք Հայաստանի» վեպի քննությունը ներկայացրել «Գեղարվեստական արձակի կառուցման առանձնահատկությունները» վերնագրով:

Վեպի պատմության ու տեսության վերաբերյալ գրականություն սահմանները գրեթե անընդգրկելի են: Վեպի մասին տեսությունը կազմավորել է մի ամբողջական ու կանոնակարգված գիտություն, որով զբաղվել ու շարունակում են զբաղվել գրականության պատմաբանների, տեսաբանների, փիլիսոփաների ու տարբեր գիտաճյուղերի մի քանի սերունդներ: Քննության առանցքում վեպը բնութագրող ու սահմանող ամենատարբեր հարցադրումներ են՝ ծագումնաբանության նախադրյալներն ու կազմաբանական- գեղագիտական խնդիրները, ներքին տրանսֆորմացիաների հնարավորությունն ու փոխաձևությունները, մեթոդաբանական սկզբունքներն ու տիպաբանությունը, ապա ներքին տարածության մեկնաբանություն՝ բնագիրը կազմակերպող հնարավոր բոլոր բաղադրատարրերի յուրացումներով:

Հայոց վեպի պատմատեսության մեջ զարմանալի ու հետաքրքիր էջ է ձևավորել Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի...» պատմավեպի քննությունը, որն իր շուրջ մեկուկեսդարյա պատմության ընթացքում քննարանվել է ամենատարբեր դիտանկյուններից ու տարաբնույթ հարցադրումներով՝ առթելով վեպը բնութագրող էթնիկական, պատմա-հոգեբանական, գաղափարական ու գեղագիտական, իմաստասիրական բազմաբնույթ հարցադրումներ, գաղափարներ, դրույթներ, վարկածներ, տեսական- մեթոդաբանական ու տիպաբանական ընդհանուր դիտարկումներ:

Հենց այս հարցադրումներն են ըստ ամենայնի ձևակերպել հայոց պատմական ժամանակի վերապրումն, ազգային ինքնագիտակցության, ֆիզիկական ու հոգևոր ինքնաճանաչման, ինքնության զարթոնքի պատմությունը, որ վիպական կառույցում գրողն իրացնում է երեք սուբստանցների՝ բնաշխարհ, պատմություն, մարդիկ ազգակազմիչ անունների միջոցով: Սրա մասին աբովյանագիտությունը շատ է խոսել՝ «Վերքը... » ներկայացնելով իբրև պատմավեպ, ուր ձևակերպվում է 19-րդ դարակեսի բարդագույն ժամանակներում հայոց պատմության շրջադարձը՝ ժամանակի ներքին հոսքերում փորձելով սահմանել գոյաբանական այն հիմնախնդիրները, որոնք անցյալի ու ներկայի ժամանակները կապակցում են հստակ գիտակցված ինքնափրկության նպատակաբանությամբ: Ընդունված է ասել, թե Աբովյանը պարզապես գրի է առել

ինքնափրկության այդ մաքառումն ու ազգային ոգու ու գոյության տիեզերական միֆոլոգիան:

Ապա դասական գրականագիտությունը խոսում է «Վերք Հայաստանի» վեպի պոետիկայի մասին՝ եվրոպակա՞ն ձևույթի վեպ է «Վերքը... », թե՞ արևելյան կանոնի՝ (Ստ. Ոսկան- Մ. Նալբանդյան), ի՞նչ ժանրային առանձնահատկություններ ունի և իմացաբանական ինչ հղումներում է կազմակերպում պատմության փիլիսոփայության աբովյանական ընկալումը: Եզրահանգումը ձևակերպում, ընդհանուր հայտարարի է բերում վիպասանության գաղափարը, թե Աբովյանը եվրոպական վեպի փորձի վրա կառուցում է ազգային- ազգագրական վիպասանության իր տեսակը՝ հիմքում դնելով ոչ միայն ստույգ պատմավավերագրական փաստը՝ 1826-1828 թվականների ռուս-պարսկական պատերազմը, Արևելյան Հայաստանը մահմեդական ահռելի տիրապետությունից ազատագրելու իրողությունը, այլև պատմականորեն ստույգ հերոսի կենսագրական հետագիծը, որ ուղիղ հղումով առնչվում է ոչ միայն իրական Հայաստանի մաքառումներին, այլև գոյության այն բանահյուսությանը, որ իմաստ է ստանում հայոց բարքերի ու սովորությունների, ավանդույթների ու կենցաղավարության էթնիկ- քրիստոնեական գունավորումներով: Ահա անհատական կատարելության այս դրվածքը ուղիղ գծով Աղասու կերպարը միացնում է ազգային ոգու ինքնագիտակցման ու էքզիստենցիալ գոյաբանության գաղափարին, որ կապակցում է վիպական դեպքերն ու իրադարձությունները, շարժման մեջ դնում սյուժեի հետագիծը:

Ահա հենց այս կետի վրա, սակայն բոլորովին այլ դիտանկյունից է վեպը, ապա պատմողի,Աղասու կերպարները քննում Աստղիկ Սողոյանը իր ատենախոսության մեջ: «Հերոսի ճանապարհի մոնոմիֆի մոդելը վեպի կառույցում» ենթագլխում ամերիկացի տեսաբան Ջ. Քեմբելի «հարազատ տուն- հեռավոր աշխարհ» տեսության շրջանակում ներկայացնելով հերոսի ճանապարհի մոնոմիֆի մոդելը՝ ըստ հստակ ձևակերպված և անվանված հանգրվանների: Անցումային ամեն փուլը կազմակերպող հանգրվանային նշանը հստակ խնդիր է ներկայացնում՝ տեքստային տարբերության մեջ առբերելով հնարավոր միևնույն բնագրի սահմաններում պարփակված սեմիոտիկ դաշտերն ու ըստ կարելվույն վերլուծելով ու մեկնաբանելով դրանք: Իմացաբանական հղումն այս տեսությանը հոդվածագիրը մեկնաբանում է հանգամանքով, թե Աբովյանի վեպն ունի որոշակի բանահյուսական հենք՝ « ժողովրդական վեպին ընորոշ կաղապար», «հեքիաթի նշանային համակարգ», և, ինչպես նկատում է ակադեմիկոս Արամ Ղանալանյանը, «հիշեցնում է ժողովրդական հերոսական դյուցազնավեպերը»:

Այս ուսումնասիրությամբ Աստղիկ Սողոյանը հարաղրում է պատմության փիլիսոփայություն- պատմության ստեղծաբանություն դաշտերը՝ վեպի քննության հիմքում դնելով համաշխարհային միֆապոետիկայի և արքետիպերի տեղայնացված կամ „հայկական„ տարբերակի բազմապլան վերլուծության ակնհայտ կարողություններ: Անշուշտ, վեպի քննության այս համաբնագրում Աստղիկ Սողոյանը դիպաշարային դրվագները մտածված և ճիշտ է ընտրում՝ ընտրված մեթոդոլոգիայի սահմաններում իրականություն դարձնելով մոտիվը կազմակերպող հանգրվանային բառի, բառակապակցության նշանային արժեքն ու դրա դերը մշակութային որոշակի

միջավայրում, քննությունից դուրս թողնելով միջանկյալ որոշակի օղակներ, որոնք առնչվում են վիպական միջավայրին, պատումի գեղագիտական համակարգին, ապամիֆականացման ընթացքին և այլն : Կարևոր է նաև այն, որ վերլուծության ընտրված համակարգը հնարավորություն է տվել հեղինակին վերարժևորելու դիպաշարային մի շարք «բաց կետեր» , որոնք նախկինում դիտվել են մինչև անգամ որպես վեպի այդ հատվածների թերամշակման արդյունք /Նազլուի և մոր նամակները, Մոսիի երազը, Հասան խանին չսպանելը և այլն/:

Հեղինակի գիտական մտադրությունը պարզ է՝ այն, ինչ ինքը պնդում է, հասկանալի է իր իսկ ներկայացրած համակարգում, դրանից դուրս հաճախ բազմաթիվ հարցեր է առթում: Հայցորդն իր շարադրանքում ամենայն մանրամասնությամբ «պատասխանում է» այդ հարցերին: Նաև՝ հետաքրքիր դիտարկումների և նոր ձևակերպումների հնարավորություն ընձեռում: Սա արդեն կարող է հետաքրքրել գրականագիտական որոշակի շրջանակի, նաև քննարկումների ու բանավեճերի առիթ հանդիսանալ: Ինչպես որ քննարկման առիթ կարող է հանդիսանալ ատենախոսի պնդումը, թե « Խաչատուր Աբովյանի ստեղծագործությունը /ներառյալ «Վերք Հայաստանի...» վեպը/ «քչերն են կարդում», թե դրանք «դժվարընթեռնելի ու բարդ գործեր» են, որոնց «դժկամությամբ են մոտենում և՛ ուշակերտները, և՛ ուսանողները», ինչը, կարծում ենք, գլխավորապես քննարկելի է մեր կրթական համակարգի արդյունավետության համատեքստում: Որ դասական մի շարք գրողների ստեղծագործությունը նորովի քննության կարիք ունի, վիճարկելի չէ: Սակայն, մեր կարծիքով, Խաչատուր Աբովյանն ամենևին չի պատկանում այդ կարգի դասականների թվին, և տվյալ դեպքում խոսք կարող է լինել ոչ թե վերարժևորման, այլ՝ գրականագիտության զարգացման և «տեքստի վերլուծության նոր չափանիշների առաջքաշմանը զուգընթաց», եղածի աստիճանական լրացման, հարստացման ու խորացման մասին, ինչը ձեռնարկել և հաջողությամբ իրացրել է ատենախոսը:

Աստղիկ Վալերիանի Սողոյանի «Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը» թեկնածուական ատենախոսությունը շարադրված է գրագետ հայերենով: Ատենախոսությունը առանձնանում է կառուցվածքային գետահետազոտական մեթոդին համապատասխան կարգա-հասկացութային եզրույթներով և բառապաշարով, որոնք պայմանավորում են հետազոտական բարձր մակարդակ: Գիտական ապարատը միանգամայն ճշգրիտ է, օգտագործված գրականության ցանկը՝ առանց էական բացթողումների, ըստ գիտական խնդրադրության՝ հիմնավորված և վկայակոչված:

Սույն ատենախոսության վերաբերյալ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ նոր գրականության բաժինը դիտողություններ չի ներկայացնում□ նախ, որովհետև կատարված է գիտական պատշաճ մակարդակի, հստակ համակարգված ու հրաշալիորեն իրացված աշխատանք, ապա տեսնում է միանգամայն արգասավոր ու խոստումնալից ճանապարհը, որ սպասվում է Աստղիկ Սողոյանին գրականագիտության ասպարեզում: Ուստի՝

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Աստղիկ Վալերիանի Սողոյանի «Խաչատուր Աբովյանի պատումի

արվեստը» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական ատիճանաշնորման կանոնակարգի պահանջներին և ժ□01□01- «Հայ դասական գրականության» թվանիշին: Այն երաշխավորվում է հրապարակային պաշտպանության:

Միջնորդում ենք Երևանի պետական համալսարանի Գրականագիտության 012 մանագիտական խորհրդին՝ Աստղիկ Վալերիանի Սողոյանին շնորհել իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Ս. Մարգարյան Միրանուշ Մարգարյան

ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության

ինստիտուտի Հայ նոր գրականության բաժնի վարիչ,

բանասիրական գիտությունների թեկնածու

Միրանուշ Մարգարյանի ստորագրությունը

հաստատում եմ

Գրականության ինստիտուտի փոխտնօրեն,

բանասիրական գիտությունների թեկնածու

Հերիքնազ Որսկանյան

03 մայիսի 2021 թվական